

Հիշեալ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 27

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԹԻԻ

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽՈՒԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԸ	Տարեկան 54 ՂԸ	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱԲՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ Ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բուլանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ ԵՒ ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, շղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պադի-գարու, Օնոգի-Պաֆ (Էօսկր-եֆէնի) վաճառասան զինուոց Թիւ 16,


ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصادوریان) شرکت صرّیه مطبوعه — باب عالی جاده سنده قوسو

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշքսի Թիւ 52

Հատոր 40 փարս



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
 փանգամայն մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը տունը կտրի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՁ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
 ՄԱՍՆԱՎ ՀԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՏԱՐ | Զարլը Պօյուլ , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 27

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԹԻԻ

ԱՆՈՐ ԱՍՈՐ ԿԱՐԾԻՔԸ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՎՐԱՅ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ. — Պէտք է պաշտել ու տօնել բարին ու բանարտեղծութիւնը, ըլլան թէ՛ իսկ կենդանի, ըլլան թէ՛ իսկ մեռեալ կամ չյարուցեալ՝ ոսանաւորներու ներդաշնակութեանց պէս:

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ. — Եօ՛, բարեկենդան՝ բարեկենդան՝ 1903ի մեր բարեկենդանն էր, Ս. Յակոբայ Տաճարին մէջ ըլլալու էիք՝ հաւատալու համար:

ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ. — Առանց դրամի մարդ, առանց փարայի բարեկենդան:

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԳԱՅԸԳՃԵԱՆ. — Բարեկենդան, օ՛խ պապամ, կ'ուտենք կը խըմենք և ուրախ կ'ըլլանք, մինչեւ որ երուսաղիմայ հաշիւներու կնճառտ հանգոյցը քակուի:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ. — Հերիք է որ բարին ըլլայ մէջն ու դուրսը, բարեկենդանն է ճշմարիտ ու գեղեցիկ, որոնց դիմակներովը զարդարուիլ ներքին է այս ծիծաղահունչ ծրերուն:

Յ. ԴՈՒՐԳԷՆ. — Բարեկենդան՝ է խնդուըրտիւն ինչ սարքեալ խայտառակութեանց, յորմէ պարտ է և պատշաճ խոյս տալ մեզ ոսկեդարեանցս՝ քաւ ի շուկայիկն . . .:

ՀՈՐՈՅ. — Պէտք է ախպար, ճշմարիտ բարեկենդանութիւնն ամուսնական համեստ կենցաղի մէջն է, անոր միօրինակ համոմն ըլլալու են՝ չափազանց արծաթասիրութիւն, և բծախնդրութիւն:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Զեղի բանմ ըսեմ, վանեցիք ձիեր բարեկենդան կաարտասանիկն պարիէկենդան և ես՝ Պարնաթան Նաթան:

եանս՝ զայն կը կրկնեմ, որպէս զի լեզուաբանութիւն նոր զարկւմ առնիէ . . . :

ԱԼՓԱՍԼԱՆ. — Բարեկենդանն է անկենդան, եթէ չիկայ կին պար և թան: Մարդիք յաճախ զուարճանան՝ երբ կը պարպեն տամէրճանան . . . :

ՍԻՊԻԼ. — Բարեկենդանը այն հարսնուկըն է, որուն դէմքը քողքով մը ծածկուած գոյն զգոյն ծաղիկներով ու զարդարուն՝ իր իսկութիւնը կը պահէ մաքուր ձիւնին պէս, և որ հարսանեկան խրախճանութիւնք կուգան աղտոտել ու միշտ բան մը պակսեցնել անկէ:

Հ. ԱՍԱՏՈՒՐ. — Բարեկենդանի վրայօք Յ. Յ. Պարոնեան շարք մը գրածներ ունի, որոնք մասնաւոր հատորի մը մէջ հրատարակելու . . . միտք ունիմ:

Յ. ԱԼՓԻԱՐ. — Carnaval, tiens mon vieux ! Ի՛նչ անուշ զբօսանք, ի՛նչ աղուոր ժամանց, ուր կրնաս կնկան մը բոլոր պահած մասերը դիտել ու զբաղիլ անոնցմով: Դիմակին տակ ի՛նչ ձկուն մարմիններ կան, որոնց արտաքինը թէեւ բան մը չըսեր, սակայն . . . կրնաս մտածել թէ իրենց ներքինին վրայ շատ բան կը խօսին անոնք: Երանի թէ եօթը չաբաթ մեծ պահքի տեղ եօթը չաբաթ բարեկենդան ըլլար. Et encore ! . . .

ԶԱԶԱ. — Բարեկենդանը չաբաթ մը կը տեւէ կ'ըսեն օրացոյցէն առնելով, սակայն պէտք չէ մոռնալ այն ՄԵՄ բարեկենդանը, որ տարուան տասներկու ամիսներուն ալ տեղի կ'ունենայ մեր կրթական ու գրական աշխարհին մէջ: Զկայ դասակարգ մը, չկայ վարժուհի մը, որ դիմակաւոր չըլլայ, նոյնպէս չկայ խմբագիր մը՝ որ չի ծածկէ իր տիրող բնոյթը. այս վերջինները, փոխանակ դիմակը դէմքերնուն անցնելու՝ գրիչներնուն վրայ կը կրեն:

ՏԻԿԻՆ Ա. ԹԵՈՒԻԿ. — Լօստոնի մէջ բարեկենդանը շատ անշուք ու անշուկ կ'անցնի. այդ տեղի ժողովուրդը չը սիրեր արտառոցութիւնը, ես մօտէն տեսած եմ մարդիք, որոնք՝ բարեկենդանի օրերուն Աստուածաշունչ կարգաւոր անցուցած են: And so fore !

ԹԵՈՒԻԿ. — Կարծիքս. է՛հ, ես խերով կը սեպեմ կկզիլ խցիկիս անկիւնը և «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ» իս Բ. Տարին չպըռտել, քան թէ անձնատուր ըլլալ մասնարկութեան սո ճիտտա պէվկումներուն՝ զորս արդէն տարին ամբողջ ունի՝ աս ու ան:

ՔԱՍԻՄ. — Կարդացէք Օրուան մտածումներս, ուր յայտ յա՛ղիման զրած եմ բարեկենդանի իսկութեան և ինքնութեան վրայօք: Ամէն բան լաւ է եթէ չափազանցութեան չի տարուի: Մինք ո՛ւր, Ֆռէկներուն Գառնավալը՝ ո՛ւր . . . :

Ժ. ՇԻՐԱԿԱՅԻ. — Առեւտրական սեսաւէտով, բարեկենդանին՝ միայն մայրաքաղաքիս մէջ կը ծախուի 1000 լիրայի դիմակ և 2000 լիրայի մուշկինայի հագուստ:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ. — Պէղճեանի և Ֆիլդիքայի օրով բարեկենդանի մը ցայտուն նըկարագրականը ունիմ, որուն հրատարակութեանը համար ջանք չալտի խնայեմ եթէ . . . մեկենաս մը գտնեմ:

Մ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ. — Ին պիմ շլաֆն զի կեռ, բարեկենդան, եա՛ . . . : Ուղտափուշերը աւելի կը զուարճացնեն զիս քան թռուցիկ խայտառակութիւնները:

Ն. ԱՐՄԷՆ. — Բցըրիկ մարդոց գործ է պէտք է ըսել բարեկենդանը, և անոնց չլուրխուրջ արարքներն: Աւելի կը սիրեմ Նիչէին վրայօք խորհրդածութիւններ ընել քան թէ զբաղիլ բարեկենդանով, որուն մէջ լըրջութիւն ըսուածը շատոնց թեւ առած է:

Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ. — Անըջանքիս մէջ՝ կը տարուիմ երաղել բարեկենդանի եռուզեռ պուռհահալին վրայօք, ամէն ինչ բնական կը գտնեմ անոր մէջ, քանի որ սէրը շոգին է այդ խրախճանութեանց:

Հ. ՆԱԶԱՐԵԱՆ. — Պատուհանիս ետեւէն կը դիտեմ դուրսի անցուղարձը, այդ կեանքը զիս կը թօթվէ, ջիղերուս ցնցումը տուն կուտայ ինծի հեքցնելու մուսայիս, թէ երբ պիտի գայ Մայիս . . . :

Ըստ իս, ամէն օր բարեկենդան է ամէն անոնց համար՝ որոնք համերաշխ կին մը, նստելու տուն մը, ուտելու հաց մը և լեցուն քսակ մը ունին:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՄԵՂՔ ՆԱՄԱԿԻՍ

Երեք օր կայ, մեր գրասենեակին դուռը կը բացուի և շուկայի բարեկամներէս մին կը մտնէ ներս:

— Եկու նայինք, միւսիւ Երուանդ, ի՞նչ պէս ես, կը փութամ հարցնել:

— Շատ աղէկ, շնորհակալ եմ, կը պատասխանէ և աթոռ մը առնելով կը մօտենայ գրասենեակին:

— Քեզի բան մը պիտի աղաչեմ չէ չպիտի ըսես, կը յաւելու պաղատանքի շեշտով մը:

— Եթէ ձեռքէս կուգնայ, ինչո՞ւ չէ, ամենայն սիրով:

— Դիտես եմ, սա մեր էօթէնին կայ, անոր նամակ մը պիտի գրեմ:

— Ի՞նչ, դեռ կը սիրես կոր:

— Դիտցածէդ աւելի:

— Է՞, ե՞տքը:

— Կ'ուզէի հարցընել իրեն թէ ի՞նչ ընծայ կ'ուզէր որ իրեն զրկէի:

— Ասո՞ր համար նամակ գրել կ'ուզես:

— Այո, բայց գիտես ա՛, ես ուզածիս չափ աղէկ գրել չեմ գիտեր. ի՞նչ կ'ըլլայ, խաթերս համար երկու տող բան մը գրէիր:

Անանկ աղաչեց, անանկ աղաչեց որ չկըրցայ մերժել: Խիստ շատ անգամ էօթէնի վրայ խօսած էր ինծի Երուանդ, և իր ըրած նկարագրութենէն ինծի այնպէս կուգար որ այդ էօթէնին առաջնակարգ գեղեցկութիւն մը ունենալու էր, և ահա ինչու համար հետեւեալ նամակը շարադրեցի զոր բարեկամս ընդօրինակելով զրկեց իր սիրուհիին:

«Սիրելի էօթենիս,

«Ամիսներէ ի վեր կը մտածեմ քե ի՞նչ ընծայ կրնամ տալ քեզի: Ո՛րքան կը փնտռեմ այնքան նուազ կը գտնեմ բան մը, զոր դու չունենաս եւ քեզ տուած ասեմ ամենեւնի շատ հաճոյք պատճառէ քեզի:

«Ազամա՞նդ. դուն ամենեւնի փայլուն զոյգը ունիս արեւանդանիդ տակ. մարգարիտ, երեսուններկու հասր պահուրսած եմ քրքնեռուդ ետին. ոսկի՞, անոր քելերը անհոգ անհոգ կոնակող ի վար կը քափես. ծաղիկ, քրքնեռեդ աւելի քարմը եւ աւելի անուշա-

հոսր ո՛ւր տեսնուած ե. քաւի՞՞, կա՞յ այսերեդ աւելի քանկագինը. փլո՞սկը, կարելի՞ ե ուտեռուդ համար գործածուածեմ աւելի փայլունը գտնել. շաքա՞ր, քեզմէ՞ աւելի անուշ...:

«Ահա՛, ինչպէս որ կը տեսնես, կը շուտիմ ընտրութեանս մէջ եւ քեզ կը բողբոմ հրամայելու իրաւունքը. սիրես եւ քաւս քեզ համար տրամադրելի եմ, հոգիս»:

ԵՐՈՒՍՆԻ

* * *

Այս առաւօտ ուրախ դուարթ վրաս վազեց բարեկամս:

— Քեզ ո՞րքան երախտապարտ եմ, չեմ գիտեր, նամակիս պատասխանը առի:

— Նայիմ:

Ահաւասիկ անոր պատճէնը:

«Քուզում եմվանք,

«Ինչ խըսար օր քեզի զանկէք, կամչնամ կօր ալ ըսելու, Պէյ օղլու էլլաս նէ ինծի չիֆ մը կըլասէ էլիվէն ա՛ր. օխքը մէկ չէյրէք նօսքօ. աֆ կ'ընես:

ԷԺԷՆԻ»

* * *

Հիմա իմ տեղս դուք եղիք: Ես կը հասկընամ որ մարդս կրնայ սիրել աղջիկ մը որ հայերէն չգիտեր, ուղղագրութիւն չունի, քեզի պէս չկրնար գրել կարդալ: Կը հասկընամ նաեւ աղջիկ մը որ զոյգ մը ձեռնոցը բերնովը կ'ուզէ. ան ալ կը սիրուի: Բայց աղջիկ մը որ 7/1 ձեռքեր ունի, ատիկայ ամենուն սիրելիք բանը չէ:

Մեղք նամակիս:

Յ. ԱԼՓԻՍԻ

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. դաւառնեռու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Քամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

CHIC!...

Շիքը ոչինչ մըն է, հագուելու, խօսելու, քալելու, ծաղրելի ըլլալու կերպ մը, լաւ չի կենալ, պարտքեր ընել, ամուսինը խաբել: Դեռ ասկէջ ալ պակաս. բանթալօնին ծունկին վրայ ծալք մը, Ժիւրին մէջտեղ կար մը, անուշահոտութիւն մը, ձեւ մը, բա՛ռ մը:

Եւ սակայն չիքը ամէն բան է: Կրնաք շատ սիրուն կին մը ըլլալ, կամ հարուստ դրամատէր մը, խոտապահանջ առաքինութիւն մը ունիք, և կամ աշխարհիկ կատարեալ մարդ մըն էք, բայց եթէ չիքութիւն չունիք, գոյութիւն չունիք: — Դիւրին չէ չիքը ստանալ: Գրուած կանոն մը չունի որու կարենաք հետեւիլ — այսու հանգերձ պիտի փորձենք զայն ամփոփել: «Շիք» բառին ծնունդին մասին քերականագէտներն անգամ համակարծիք չեն իրարու: Շիք չի ծնիր մարդ, և նոյն իսկ շատ զուարճալի է մտածել որ այս ասպարէզին մէջ անուն մը չինած մարդիկ իսկ, ով գիտի տղայութեանն ին ո՛րքան լացած են 10 փարայի շաքարի համար, ո՛րքան մատներնին քթերնին խոթած են ու յետոյ բերաննին, ով գիտէ ի՞նչ խենդ ու խելառ կերպարանքով երեւցած են շատերու:

Շիք ըլլալու համար ֆիզիքական և բարոյական ինչ ինչ պայմաններ լրացունելու է: Փիզիքականօրէն պէտք է զերծ ըլլալ արտաքին ամէն խեղաթիւրումներէ, սակայն թերութիւններ ալ կան որոնք նորոյթէն ընդունած են. օրինակի համար մէկ աչքը միւսէն տկար ըլլալ և մօնօլը գործածել: Պէտք է զօրաւոր կազմ մը ունենալ, նախ սքոլքներ ընելու, երկրորդ՝ օրը 16 անգամ կարենալ հագուստ փոխելու համար, թատրոնի, ճաշկերոյթի, five o'clockի համար. և այլովքն հանդերձ: Իսկ բարոյականի տեսակէտով — Աստուած իմ, մէկ բան մը միայն կարեւոր է. — մե՛ծ հարստութիւն մը՝ որ աւելի նախընտրելի է եթէ ծնողքը չահած ըլլան ժամանակին:

Մեծ իմացականութիւն մը անհրաժեշտ չէ. նոյն իսկ, վտանգաւոր կը նկատուի ատիկա, որովհետեւ այն ատեն չիքը կը մշուի տրա-

մաբանել, վիճաբանիլ ևլն.: Արդ, չիքը չի՛ վիճաբանիր:

Շիք կեանքը ոչ սկիզբ ունի և ոչ վախճան: Շիք մարդոց բոլոր գործերը, բոլոր մտածումները, բոլոր վայրկեանները կը կառավարուին խիստ կանոններով:

Շիքութեան առաջին պայմաններէն մին է է՛ն սուղ թատրոններու առաջին ներկայացումներուն ինքզինքը ցուցնել. անանկ տեղեր՝ վերջապէս ուր էսնափ դասակարգը դիւրաւ չի կրնար մուտ գործել սուղ ըլլալուն համար: Նաեւ, այնպէս մը ձեւացնելու էք որ իբր թէ բոլոր առթիւները թատրոնի պիտը, հեղինակները ամէնքն ալ եկած ձեզի աղաչած են, արտասուալից, որպէս զի հաճիք ձեր ներկայութեամբը պատուել գիրենք, և դուք ալ ... վերջ ի վերջոյ զիջանած էք ընդունելու իրենց հրաւերը:

Երբոր շատ նշանաւոր առաջին ներկայացում մը կայ, անտարբեր մը կսկսին. « Ի՞նչ պէս, երկու թիկնաթո՞ռ միայն գտեր էք, սիրելի տիկին ... ո՛հ, եթէ գիտնայի, հիմալ ետ զրկեցի երեք հատ օթեակի տոմսակ զոր ի՞նչ ընելս չէի գիտեր ... »:

Բայց մի՛ խոստովանիք որ ձեր placesերը դուք վճարած էք. որովհետեւ մէջ տեղ կը հանէք շարժման մէջ չի գտնուելիդ և երբեք առքիսք ընդունելիդ ճաշի, նաեւ քանի մը հարիւր ֆրանք օրադրողի մը փոխ տուած չըլլալիդ:

Շիքութեան կարգէն է նաեւ ներկայացումը սկսելէն վերջը համալը, բոլոր նայուածքները իր անձին վրայ սեւեռելու համար, նաեւ այնպէս մը կարծեցնել տալը թէ ճաշկերոյթ մը տուած էիք նոյն օրը, կամ ուր է հաւաքոյթ մը ունեցած:

Շիքութիւն է նաեւ կանանց համար, թատրոնի մէջ խոշոր ծաղիկներով, փետուրներով բեռնաւորուած ահագին գլխարկներ կրելը, այնպէս որ ետեւի նստողները բան մը չի տեսնան, օրուան գայթակղեցուցիչ լուրերուն վրայ խօսիլը պարոններու հետ, նաեւ եթէ ներկայացումի մասին մեծամասնութիւնը հիացիկ կերելին, այն ատեն, իրենց հակառակ կարծիք ունենալու է. եթէ ներկայացումը չափազանց ուրախացուցիչ է և ամէնքը տաքօրբնապէս կը խնդան, այն ժամանակ դա-

նեղու ձեւ մը բրէք այդքան կոպիտ ուրախութենէ մը. իսկ եթէ ներկայացումը տխուր է՝ այն ժամանակ ալ անտարբեր ձեւացէք:

Ներկայացումի մը ատեն, երբ յուզումը իր լրման հասած է, յստակ խնդուք մը հըրաշալի արդիւնք կ'ունենայ, ամէն մարդ այն ատեն ձեզի կը նային, ձեր արդուզարդը կը քննեն:

Բայց ո՛ր մէկը թուենք և ինչպէ՛ս թուենք՝ կարենալ պատկերացունելու համար այն տարօրինակ, աներևակայելի և գերահրաշ չեա գիտեր ի՛նչը որ chic կը կոչուի...:

Թարգմ.
Լ...

ՄԵՐ ԲԱՑԱՌԻԿ ՅԻՒՐ

ԵՒ

Ա. ԷՖ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մեծայարգ Վահան ԷՖ. Փափազեան,
Տճօրէն-Խմբագիր «Հանրագիտակ»ի
Կ. Պոլիս

Հաճոյքով կարդացի ձեր «Կէս-գոց» նամակը, («Հանրագիտակ», թիւ 25): Չափազանց աղնիւ ու ներողամիտ են ձեր տողերը:

Բացառիկ թիւերու նուիրած Գրոնիկիս մէջ, (Ար. Մամուլ թիւ 7) խիստ որոշակի ըսած էի թէ՛ պատահութիւնը չէի ունեցած «Հանրագիտակ»ը տեսնելու: Նկատողութեան չէք ուղած առնել այդ ծանօթութիւնը, ուրով ձեր դիտողութիւնները շատ արդարացի չեն:

Յետոյ, ինչո՞ւ կը կարծէք թէ՛ անպատճառ «Թերի գործ մը արտադրած կ'ըլլամ», պարզ Գրոնիկի մը մէջ չխօսելով հրատարակութեան մը վրայ՝ զոր հոս, գաւառին մէջ, տեսնելու պատահութիւնը չեմ ունեցած, և զոր անպատճառ տեսնելու ստիպուած չէի:

Երբ այնքան աղնուօրէն կարեւորութիւն կը թուիք ընծայել իմ կարծիքներուս, դանոնք հայթայթելու նպատակով պարագաներուն մէջ մուտացկոտ գտնուած չէ՞ք տեսներ ինքզինքնիդ, ժամանակին զանց ըրած ըլլալով զրկել ինծի «Հանրագիտակ»ի այդ բացառիկ թիւը:

Իսկ հիմա որ պատիւը կ'ընէք ինծի զըրկելու զայն, «սպասելով որ կարծիքս յայտնեմ անոր մասին», — քիչ մը կը շփոթեցընէք զիս:

Բայց դուք իսկ չէ՞ք ըսողը թէ՛ «Հանրագիտակի բացառիկ թիւին՝ իր նմաններուն մէջ է՛ն աչքառուն ըլլալը՝ ինծի պէս գրասէրներ, կարելի է ինձմէ ալ աւելի գրական ճաշակ ունեցողներ հաստատած են» արդէն:

Այս էր ձեր «Կէս-գոց նամակին» իմ խիստ-բաց պատասխանս, զոր պիտի սիրէի ձեզի վայել անկողմնակալութեամբ հրատարակած տեսնել ձեր պատուական հանդէսի յառաջիկայ թիւին մէջ:

Որուն համար յայտնելով իմ կանխայայտ շնորհակալութիւններս, կը ինչդրեմ որ հաճիք ընդունիլ, Տէր Խմբագրապետ, խորին յարգանքներուս հաւաստիքը:

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ազնիւ Ա. ԷՖ. Յարուքիւնեան,

Կէս-գոց նամակիս, ձեր խիստ-բաց պատասխանը հրատարակելով հանդերձ՝ կը ներէք անշուշտ երբ երկտողով մը դիտել տամ ձեզ ինչ ինչ կէտեր, որոնք ԽԻՍՏ ԳՈՅ մը նայած են ձեր խիստ բաց նամակին մէջ:

1. — Չէք ընդունիր, ու կրէք թէ՛ «ինչո՞ւ թերի գործ մը արտադրած կ'ըլլամ, պարզ քրոնիկի մը մէջ՝ չխօսելով հրատարակութեան մը վրայ՝ զոր հոս, գաւառին մէջ, տեսնելու պատահութիւնը չեմ ունեցած, եւ զոր անպատճառ տեսնելու ստիպուած չէի»: Եթէ չեմ սխալիր ձեր գրութիւնը նպատակ ունէր կաղանդի բացառիկ քիւերուն վրայ խօսելու, որոնց մէջէն մէկ երկուքը ընդունած՝ և մեր հանդէսը չստացած ըլլալուդ համար զանց ըրած կերեւիք: Անշուշտ եթէ երկտող մը գրած ըլլայիք՝ յայտնելով ձեր նպատակը, սիրով պիտի զրկուէր ձեր հասցէին օրինակ մը, քանի որ ոչ մեր աշխատակիցն էք և ոչ ալ բաժանորդը, այլ լոկ իբր ամաթեօն պիտի սիրէինք զրկել ձեզ հատմը՝ ձեր յօդուածը կասարեալ բնծայելու համար, և (դարձեալ կ'ըսեմ) անթերի: Եթէ ասոր դիտողութիւն ընէք, այն ատեն միտալնդ

միւս կողմը կատարուինք կարգաւ ուր դըր-
ուած է ... «Եւ զոր անպատեհաւ տեսնելու
ստիպուած չեի»:

2. — Հանրագիտակի բացառիկ թիւը
չդրկելնիս մոռացման մը կը վերադառնայ, զոր
չենք կրնար ընդունիլ՝ logique չըլլալուն հա-
մար: Բիւման մը չենք, Սիրելիս, որ կարենա-
ինք գուշակել թէ դուք այսպիսի գործ մը
խմբագրել կուզէիք, այսինքն բացառիկ թի-
ւերու առթիւ յօդուած մը, որպէս զի մենք
ալ օրը օրին հասցնէինք ի շարս միւսներուն:
Ասկէ առաջ նոյն իսկ պարագայ մը տունն չէ
տուած մեզ պարս ու պատշաճը տնօրինելու:

3. — Ինչո՞ւ կը շփոթի՞մք ձեր արդար և
անկողմնակալ կարծիքը յայտնելու մեր թեր-
թին մասին, հիմա որ ի ձեռին ունիք: Այս
պարագան քիչ մը տխուր կերելի մեզ և կա-
րի մութ: Իրաւ է որ մեր գրութեան մէջ
ըսուած էր թէ՝ «մեր բացառիկ թիւը իր
նմաններուն մէջ է՛ն աչքառուն ըլլալը՝ ձեզի
պէս գրասէրներ, կարելի է ձենէ ա՛լ աւելի
գրական ճաշակ ունեցողներ հաստատած են,
արդէն», կարծեմ ձեր արժանապատուու-
թիւնը ճանկրթելու չափ կծու զրուցուածք
մը չէր, քանի որ Պէրպէրեանի, Մրմբեանի,
Սիպլիի, Հ. Ասատուրի, Թ. Թէրզեանի և
դեռ կարգ մը անուն ու հոչակ ունեցող գը-
րադէտները ակնարկել ուզուած էր այդ տո-
ղերուն մէջ: Եւ կարծեմ թէ գոնէ դուք առ-
նուելու չէիք զայն հեգնականի տանելու չափ:

Սիրելիս, որչափ անձնական յարաբերու-
թիւնն չունինք մէկ մէկու հետ, ոչ ալ թեր-
թըս պատիւը ունեցած է չքաւորուելու ձեր
սիրուած գրչով, սակայն և այնպէս կը սի-
րեմ յուսալ որ, եթէ ոչ ձեր լեզուն կամ
գրչը, գէթ ձեր խիղճը պիտի հաստատէ մեր
ԱՐԴԱՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆները, որ հիմնուած
են ԱՆԿՈՂՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ վրայ:

Յարգանքով

Վ. Փ.

ԿԱՐԵԻՈՐ

Գաւառներէն և թէ հոսկէ ջերմապէս կը
վնտռեն մեր ԿԱՂԱՆԴԻ ԲԱՅԱՌԻԿ ԹԻԻԷ,
և կը հարցնեն թէ՛ ո՞ւր կրնայ գտնուիլ: Առ-
այս կը ծանուցանենք թէ մեր Բացառիկ թիւը
կրնան ունենալ ամէն անոնք՝ որոնք կը դի-
մեն ուղղակի ՊԱԼԵՑ ԳՐԱՏՈՒՆԵՐ, Չափա-
հըլաւ թիւ 20, Երեւոյ նամակին կցելով Յ զրշի
փուլ, մէն մի թիւի համար:

ՍՈՒՏՏԱՆԵ ՆՈՒԵՐԻՆ

ՎՆԱՍԱԿԱՐ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Երկու բան զիս կ'ապշեցնէ, մէյ մը այն
անձը՝ որ ոտքէ մինչեւ զլուխը պարտքի մէջ
լողալով կը յանդգնի աջ ու ձախ նուէրներ
տեղալ ... Թուքոտ բերանով, մէյ մալ այն
անձը՝ որ հինգ փարանոց դնդասեղ մը նուէր
ստացած չըլլալով, կը համարձակի հրապա-
րակաւ նուիրատուութեան արդիւնք ցոյց
տալ իր անձին կամ դրացիին վերաբերող
արդուզարդերը: Առաջինը խաբեբայ մըն է,
իսկ վերջինը անապարծ մը, մին իր վարկին
կը վնասէ, իսկ միւսը՝ պատուոյն ու վարքին:

Ասոնց իւրաքանչիւրին վրայ զատ զատ
խօսելէ առաջ, ըսեմ նախ և առաջ թէ՛ ի՞նչ
բան զիս կ'ստիպէ այս նիւթին վրայ դրելու:

Անցեալները, մտերմական հաւաքոյթի մը
մէջ, քիչ մը օղին, փսփո մը բարեկենդանին
և կտորիկ մ'ալ Առաջնորդարանի պարտքին
վրայ խօսուելուսէ յետոյ, դարձանք դադ-
րեցանք սա հարցին վրայ կեցանք թէ. —
Անոնք որ նիւթապէս ի վիճակի չեն թէ՛
անհատական փոխադարձ նուիրատուութեան
և թէ՛ հանրային ոչ-պարտաւորիչ նուիրա-
տուութեան կրկին սովորոյթներն յարգելու,
իրաւունք ունին, սա՛ տուինք, նա՛ տուինք
ըսելով ինքզինքնին և ուրիշները խաբելու:
Եթէ չունին, ինչ որ ճիշդ է, բարեկրթու-
թեան կանոնն ի՞նչ կը տրամադրէ այս կարգի
Տօն-Քիչօթներու նկատմամբ: — Դուք խա-
բեբայներ էք ըսելով բացէ իրաց երեսնին
վա՛ր առնել, թէ չէ խաթէր համար աւանակ
ձեւանալով՝ բոլոր ըսածներնուն հաւատալ
կեղծել:

Խնդիրը հետաքրքրաշարժ էր, ուստի նա-
մէն ոք փութաց իր գիտցածը զրուցել:

Մին, ի սէր բարեկրթութեան, աւանակ
ձեւանալուն կողմը բռնեց, ուրիշ մը՝ ի պա-
տիւ անկեղծութեան, էջ ըլլալու տեղ՝ գէշ
ըլլալու սկզբունքը պաշտպանեց, երրորդ մը՝
յանուն մարդասիրութեան՝ նուիրատուն կա-
պել ու փրկիչ նետելուն պէտքը շեշտեց, իսկ
մոզաւորս, որ գործը զուտ հանրային օգտի
տեսակետէն կը դիտէի, փոխանալ ամուլ վի-

ճարանութեամբ մը ականին մէջ ջուր ծեծելու, լաւագոյն համարեցի՝ Տօթ. ՎԻԼԱի դարմանական մէթոտին հետեւողութեամբ՝ հրապարակաւ մէկ քանի սրողունց պղպեղ ցանել այն ամէն մեծ-խօսիկ ետալի բերաններու մէջ, որոնք չ'գոհանալով ընտանեկան միամտուկ չըջանալիներու մէջ կառուցած սպանիակա՛ն գղեակներով, հեղ մը մէկ կ'ելլեն բարեհապատակ հաստատութիւններն ալ նպաստաւորել իր'նոյ երեւակայական նուիրատուութիւններով:

Յառա՛ջ ուրեմն, նուիրատու պարոններ, գործողութիւնը ձեզմով սկսինք:

Դուք, Միլորտներ և Ճէնթըլմէններ, նախ պէտք է զիտնաք որ 'ՆՈՒԷԲԸ' որուն հետ կը խաղաք այնպէս ինչպէս րբէֆան կը խաղան սրճարաններուն մէջ, գերադանցօրէն ազնուացուցիչ բան մը ունի իր մէջ: Մեծ քարերարութիւն մը գուցէ այնքան սխալի չէ, որքան ամհնաոյինչ համարուած նուէրի մը ընծայումը, եթէ սակայն զիտնաք դնել ձեր սիրտը, հողին և՛ ինչո՞ւ չըսեմ կ'անքը՝ այն առարկային մէջ զոր նուիրելու մտադրած էք: Այլ երբ առանց բան մը նուիրած ըլլալու կեղէնք հրապարակաւ մեծամեծս կը բարբառիք, վա՛յ ձեզ, դուք պատուազուրկ մ'էք այլ եւս: Իրեն ստախօս, խաչագող և շարլաքան առակ նշաւակի պիտի ըլլաք յա՛մնուստ: Խնդճ արարածներ, կը մեղքընամ ձեզի. բայց առնելիք ուրոնիդ չ'պիտի մեղքընայ, անիկո անողոք է. — «սա փարաներս տուր տէ ետքը ճախա ըրէ»:

— սիտի ըսէ, և իրաւունք ունի, կրնայ սակայն այդ իրաւունքը չունենալ, եթէ կամքերնուդ ոյժը քիչ մ'ալ պօշպօղազութեան ակտէն բժշկուելու նպատակին ծառայեցնէք, և այդ նպատակին ալ հասնելու համար ուրիշ միջոց չունիք, եթէ ո՛չ առաջին, բարձերնուդ տակէն պակաս չընել վնջիկ մը այն բարոյալից խրատներէն զոր անմահն Պլուտարքոս յատկապէս ի գիր առած է ձեզ նման շատախօսներու համար, և երկրորդ լի հաւատքով և ջերմութեամբ թեման տակ դնելով փարատեա մը կարդացնել տաք: Եթէ ասով ալ չբժկուիք, այն ատեն, պատուոյ խօսք կուտամ իմ ծախքովս զձեզ ամէնքդ միասին ապաքինարան

մը զրկել ... կալուածներս ծախուելէն ետքը բնականաբար:

Դալով ձեզի, նուէրընկալ Տիկիններ, մի՛ կարծէք որ խելացի պատասխան մը տուած կ'ըլլաք սուտ մը հրամցնելով այն ամէն հետաքրքիրներուն որոնք՝ ո՛վ գիտէ ի՛նչ թաքուն նկատումներէ թելադրուած, ինքզինքնին արտօնուած կըզգան ամանորի կամ տօնադարձի մը պատեհութեամբ սա հարցումներն ուղղելու ձեզ:

— Ան քեզի ի՛նչ նուէր տուաւ:

— Դուն անոր ի՛նչ նուէր տուիր:

Կը խոստովանիմ որ պարկեշտ բան մը չէ հարցափորձելու այս եղանակը, բայց միւս կողմէ չեմ հասկնար թէ ի՛նչ անուշութիւն կայ տեղէ մը փոխ ճար ընելով կամ ակուսէն կտրելով ՍՈՒՏՏԱՆԷ նուէր մը ճարելուն մէջ: Ասիկա պարզապէս ինքնախաբուծիւն է, ինքնախաբուծիւն մը որ, ամօթ է ըսել, խոստը չէ որ կը համեմատի ... իր կաշիին ապահովութեանը համար գայլին դէմ քնանալ կեղծելու գրութեան հետ:

Մըզբազ չուվալա սրղմազ, կ'ըսէ տաճկական առածը, անոնք որ ձեր քանքիքները մարսելու չափ զօրաւոր ստամոքս չունին, վաղը միւս օր իրաւունք պիտի ունենան, զորս դու պատուիրեցիր, զձեզ բամբասելու: Պահ մը ականջնիդ ետեւնիդ ձգեցէք ու մըտիկ ըրէք, եթէ կը հաճիք:

— Բա վայ պաշըմա, ես մէջէն գիտեմ, էրիկը 3-4 մէծիտնոց հափտալըսձի է իրենց քով, ինծի պիտի կլկեցնէ առ մանթարները: Ալլահը կէօրէն եօգ ամա զանն ըլան պուլու-նուր, հիչ ատղըտար բէշկէշ սուուղ էրքէկ մը աժեմին ու չաժեմին բերնին հօտը մտիկ կ'ընէ, տէ վար եէմէ:

— Բուրուկ, հիմակուան կէնճերուն բըռնած թէրթիպը խելքըդ չհամնիր կ'ը: Ալլը կիւլի չապխա, կրօն ֆիստան, խատիֆէ բալթօ, վերէն վար սալխըմ սաչախ միւսճէֆէր, հէլէ միւնակ օրթա մատի բըլանթ մատնին, շատ չըսեմ, էսնաֆի մը խանութի քէրմայէ ըսել է:

— Բէրուզէ քարով թէփէլիկը կը մոռնա՞ս կոր, անոր քարովը քիչէն քիչ մէկ տուննոց արսա կառնուի:

— Հատէ քա հատէ, բերանս բանալ չի

տայ, Ալեօնին կնիկին պէս պրօխ պրօխ հազուելուն, թող քիչ մըն ալ էրկանը վրան գըլուխը շտկուտէ. քովէն քալած ատենը, կիտես քի ճըղարայի թուղթի վրայի քալիքաթուռա է: Վայ կլիուղ կնիկ, հիչ տէյիլ իսէ ֆէսին խալիպ մը զարնել տուր, բարտիսիւին ֆըչա մը զարկ, փրթի՛ մատներդ, բանթալօնին կոճակները կարէ, բաչային չամուրները սրբէ, խունտուրային կապիչները կապէ: Աղքատութիւնը Աստուծոյ է իսէ, բիսլիսը, թէնպէլիսը Աստուծոյ է չ'է՛ ես՝:

— Վայ վերիկ մարդը, ի՛նչ ալ թէվէքէլի է:

— Ինչի՞ս թէվէքէլին, քեզի ճուրը կը տանի տէ ծարաւ ետ կը դարձնէ: Խասապէն բռնէ հազկի թիւթիւնձին տօլապը դրած է, պարտքը հազարը չուլը բազար նէ կ'ըսեն կոր, մեր էրկներն են քի մէթալիկ մը պարտք ունենան նէ մութ չաբաթ կը կտրին:

— Ձէրէ, — աման եալրում, կէնէ խօսքըս հոս մնայ, — անցածներս տանտէրը բըրթինըրը սօխախ պիտի նետեր տէ մերինին մէջ մտնելովը գործը անուշի կապուեցաւ, պարէ խըյմէթ գիտնան, նանքէօրները:

— Վախ եալրում, մախսումներուն կը մեղքընամ, կիւվէրճինի պէս անձախ բէյտահէլ մը գիտեն, չեն ըսեր քի թէմիզ թերէնտէզ հագուեցնեն կապուեցնեն տէ ֆերահին ընեն, եա կա՞յ էլ ալէմը ճաթեցնեն պիտի, պիրինձի գամարաներով աս բանայիրէն ան բանայիրը մէքիկ կտրեն: Վա՛յ կլիուղուղ, օր մը դուք պիտի ճաթիք տէ խապար չուսիք:

— Շունն առնէ մեղքը, ատ կնիկին կիտիչին չեմ հաւնիր կոր, գործին մէջ ֆըրըլտախ մը կայ տէյի կուգայ կոր ինծի ամա, չիմտիլիկ հովը ո՞ր թարաֆէն ըլլալը պէլի չէ:

— Հոգդ վար դիր, օր մը ատ ալ էյան ու պէյան պիտի ըլլայ, սատանային չարբիք չծակի անգամ մը: Ձիք ծածուկ ինչ որ ոչ յայտնուեցի, կ'ըսէ աւետարանը, խապար ես:

Կը նայի՞ք, գործը ո՞ր տեղուանքը կը հասնի կոր: Երանե՛լիներ, ի՛նչ պէտք ունիք ողջ գլուխնիդ աւետարանին տակ դնելու, ո՛վ ի՛նչ կրնայ ըսել ձեզի եթէ արժանի չէք

եղած նուէր մը ընդունելու. ո՛վ իրաւունք ունի զձեզ մեղադրելու. եթէ աղքատ Ղազարոսի մըն էք վիճակած. միթէ ամօթ է՞ աղքատութիւնը. եթէ այդպէս ըլլար, ոչ մէկ պատուաւոր վարժապետ չ'պիտի համարձակէր անօթի փորանց ման գալու:

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ մանանխոյ հատի չափ կասկած հրաւիրէք ձեր բարոյականին վրայ, որ կը հաւատամ թէ անարատ է... Յ. Սուքիասեանի ծախած դինիներուն նման, արատաւորած պիտի ըլլաք պատիւը անոր՝ որուն անունը կը կրէք, խորտակած պիտի ըլլաք ապագան անոնց՝ որոնց կեանք տուած էք: Զգուշացէք ուրեմն, անըջային նուէրներով ինքզինքնիդ պանծացնելու ու նայնամիտ ցոյցերէ: Փոխադարձ սէրն ու աղապատանքը նուէրներուն ամենէն թանկագինն է: Ձեր վարդակարմիր չրթներուն վրայ դրոշմուած միակ ջերմին համբոյրը՝ երկինքէն ինկած մանա՛պէն աւելի քարղցրահամ է:

Ահա՛ այս պէտք է ըլլայ բոլոր ինքզինքը յարգող կանանց խէչալ նուէրը:

Իզմիր

ԱՐՏՈՅՑ

Յաւօք արտի կը ծանուցանենք մահը՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՆԵԿՏԱՐ ԼԱՊՃԻՆՃԵԱՆԻ

Մայր՝ Պարսից դեսպանասան բրժիւկ Ազն. Տօթ. Սամուէլ խանի եւ ծանօթ գրագէտ Թէոդիկ Էճէնսիի, որուն յուղարկաւորութեան իսուր արարողութիւնը կասարուեցաւ Սկիւսարի Ս. Կարապէտ եկեղեցին վայելուչ շքով եւ կարգապահութեամբ:

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը փութայ յայտնել՝ Ազն. Տօթ. Սամուէլ խանի, ինչպէս նաեւ իր արտակից մեքեմին Թէոդիկ Էճէնսիի, իրենց վիճակած այս դաւնակսկիծ ցաւին առթիւ:



ՓԱՅՆՈՒՆ ԵՐԵՎՈՅԹ

Բերայի, ինչպես նաեւ
Կ. Պոլսոյ բովանդակ քա-
սերասէր հասարակութիւնը
բաղդը ունեցաւ վայելելու
անզուգական վարպէ՝ Մ.
Մնակեան եֆէնսի եւ իր
ընտիր խումբին նոր *ոգոստիս*
շուտին ե՛ն գայտուն *վո-*
վիներ :

Խումբը մօտ օրէն կը մեկ-
նի Կ. Պոլսէն *tournee* մը
ընելու համար դէպ ի Պրու-
սա, հոն ալ փայլելու ու
խլելու համար այն ջերմ ծա-
փերը, որոնց արժանի է
պէտք է ըսել :

Այս անգամ իբր վերջա-
կէտը հոս տեղի ներկայա-
ցումներու *սէնթիս*, արտա-
գոյ կարգի շէնդ ներկայա-
ցում մը տուի ի պատիւ
խումբին կարողագոյն դե-
րասանունիներէն՝

ԱԶՆ. ՏՐԻԿԻՆ ՔՆԱՐԻ

ԹԱՏՐՈՆ ՎԱՌԻԵԹԷ Ի ԲԵՐԱ

ՈՒՐԲԱԹ ԳԻՇԵՐ ԺԱՄԸ ԶԻՇԴ 3 Մ. ԻՆ

Տ Ա Լ Ի Լ Ա

ՏՐԱՄ 6 ԱՐԱՐ

ՎԵՐԻ ՊԱՆԴՈԿԻՆ ՍՊԱՍԱԻՈՐԸ

ԲՐԲՁԱԼԻՐ ԶԱՒԵՇՏ ՄԵԿ ԱՐԱՐ

Տիկին Քնարի վրայօք խօսիլը կամ գովաբանականներ հիւսելը աւելորդ է կարծեմ,
քանի որ քասերասէր հասարակութիւնը գնահատելով անոր անսգիւտ կարողութիւնը եւ ար-
ժանիքը, միշտ ծափահարած ու հազալերած է զինք: Այս անգամ բարոյական հաջալերութեան՝
փափաքելի է որ միանայ նիւթական ձեռնարկութիւնն ալ, որ կարելի է հասցնել՝ քասրոնը
անձամբ, միջոցը ծափերով եւ դրամը ափերով :

L . . .

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՀՈՎԵՐ

[ՕՐԸ ՕՐԻՆ ՅՕԴՈՒԱԾ]

PARDON

Այո՛, Ձեր անհուն և հունաւոր ներողութիւնը կը խնդրեմ յօդուածիս համար, զոր կարգաւու շնորհը պիտի ընէք: Յօդուածս կարգաւէ և ինձ ալ ներողամիտ դանուկէ առաջ մի մոռնաք թէ Թէոդիկի ԱՄԷՆՈՒՆ՝ ՏԱՐԵՑՈՅՑԸ, ամենուն բարեկեցականը կը դրէ այս օրին, ուր ութսուննոց ու սիւտաճադէմ պառուկէն մինչեւ նորապսակ հարսնուկը պաշկներ կընդունին հրապարակաւ, է՛ն լուրջ կարծուած մօռալիսքներ տեսած կնիկնուն դէմքէն առաջ սիւրալի սրունգներու վրայ կը ձգեն իրենց լրջագոյն ակնարկները, քահանաներ իրենց երեցկիւնին շրլիքէն բռնած հօռա կը քաշեն, վանականներ ոչ թէ միայն իրենց կարգէն՝ այլ և հազուստներէն ալ կը մերկանան ու կը պարեն, վարժապետ ու վարժուհի համախորհուրդ, ժամանակէն առաջ կ'արձակեն պղտիկները բայ խոնարհելու համար, և դեռ կարգ մը արտառոցութիւններ, որոնց թէեւ ականատես կ'ըլլանք, սակայն պատշաճութիւնը չի թողուր մի առ մի թուել այս էջերուն մէջ:

Բարեկենդան է կ'ըսեն ու կ'ընեն կ'ըլլան այն բոլոր արտառոցութիւնները՝ որոնք եթէ հայելիի մը դէմ չորս պատի մէջ կրկնուէին, ամօթի կարմիրը պիտի ներկէր դէմքերին:

Երանի նշանածներուն, բարեկենդանը ամենէն աւելի անոնց համար է, նկատելով որ երբ երկուքը bec-à-bec խօսակցութեան միջոցին, չար սատանան զիրենք ա'լ աւելի մօտեցնէ ու ... այն ատեն պաշկիկն վրայ հասնողի մը երեսին կրնան ըսել ճակատաբաց ... բարեկենդան է:

Ու դեռ կրնայինք ծանրանալ ու թուել կարգ մը տղեղութիւններ՝ որոնք զուարճութեան կարգ կ'անց ին այս օրերուն, չընորհիւ բարեկենդանին սանձարձակ թոյլտուութեան, սակայն կուզենք պոտմել իրակա-

նութիւն մը, զոր տեղի ունեցաւ չաթիուս Բերայի մէջ, զորանմի մը և փեսին միջեւ:

Ամէնուր զիւցած բանն է թէ՛ Բարեկենդանին ամէն ոք Բերա կը վազէ, վայելելու համար այն ամէն արտառոցութիւնները՝ զորս ուրիշ տեղ կարելի չէ գտնել: Երանի անոնց որոնք աղբալան մը ունին Բերայաբնակ, և թիւր երանի անոնց՝ որոնք զորանմ մը և աներ պապա մը ունին:

Ահա այս վերջիններէն էին Տէր և Տիկին Սաճայագեան:

* * *

Բանկալթի բարձունքը, փայտաշէն տուն մը կը բնակի վիչէն աղան իր կնոջ հետ: Իրենց մեղքին պտուղը եղող Ջապելը ամուսնացնելէ վերջ, տարիէ մը ի վեր աղա տուտու կըմբռնէին անանկ կեանք մը, որ դիտողներ ու ծանօթներ բարիէն աւելի չար նախանձով մը կը վերաբերուէին, այնքան կոկիկ ու քաշուած կապրէին անոնք: Արդէն ծնողքի մը վերջին օրերուն հանգիստը աղջիկին դուրս ձգելու մէջ կը կայանայ, չէ՞:

Բայց մտիկ ըրէկ գլխունուն եկածը այս օրերուն, որ կրնայ զձեզ զուարճացնել ու մի եւ նոյն ատեն դաս մը ըլլալ ամէն անոնց՝ որոնք փեսանուն երես կուտան:

Անցեալ չաթիու առաւօտ մը երբ վիչէն աղա կը պատրաստուի տունէն դուրս ելլալ, երկու բեռնակիր դէմը կ'ըլլան,

— Վիչէն աղանքն է՞վի պո՛ւ մը ...

— Հանկը վիչէն աղայը սօռուեօրսընըդ, պիղէ կէօյ կէլէճէք տէյիլ իտի ...

— Նասըլ ճանրմ պուրայը թարիֆ էթտիլէր ... ըսելով բեռերը վար կը դնեն, մինչ ներսէն ակիկնը վրայ հասնելով,

— Քա ճանրմ մէրիններունը չըլլայ, պէս պէլի բարեկենդանք է տէյիլ չօճուխները ելեր մեղի կուգան կոր ...

— Նասըլ չօճօխ, կընիկ ... երկու համալ ընկալմիշ ընկելով եկեր կայներ են, չօ-

ճօխինն է նէ՞ երկու փոխնորդ, քէչէ մը եղաւ գնաց, աս պօխնաներուն նայիս նէ՞ ...

— Աման Վիչէն աղա, իս դող մի հասեր, նա իշտէ բաղնիքին տալլը պօխնայէն պէլլի է քի մերիններն են ...

— Բա կընիկ, մերինները գիտնալս երկու հոգի են, աս կէօյին նայիս նէ՞, մահալլէ մը հալխը Վիչէնին գլոխը բաթլամիշ կ'ըլլան կոր ...

— Թամա'մ, թամա'մ, իչէրի կէթիրին ըսելով տիկինը ներս կ'առնէ իրեններուն կահ կարասին, ու քիչ վերջը աղջիկն ու փեսան կուգան կը համին, իս'դուսներու ու գոհունակութեանց մէջ:

— Աչքդ կը պաղե՞ր կոր հայրիկ ...

— Պաղիլ չէ ամա, երեք օրէ կը խաղայ կոր, ըսի քի մութլախ դող պիտի ելլամ տէյի ...

— Բա աման, իշտէ ելաւ, սօպային մաշան ծոնցաւ ... կ'ըսէ տիկինը Վիչէն աղայի էնսիւլթը ծածկելու համար:

— Բարի լուս հայրիկ, ըսելով փեսան ձեռք կը պագնէ, ու բոլորը մէկ վեր կ'ելլան:

— Եանի կա՞յ եա՞ ... չիգալու ըլլայիք նէ սեւեր հագնելու խըտար սիրտս պիտի կտորէր ... հէլէ չիգայիք, կ'ըսէ տիկինը աղկանը գլխարկը քօնսօլին վրայ դնելով ...

— Ինչ, միթէ կարելի՞ է տիկին, վերջէն Վիչէն աղային բերնէն, սիթէմներէն ինտո՞ր պիտի աղատէինք ... խօսք կ'առնէ փեսան, հայելին մէջ նայելով ու շտկուած մազերուն վրայ ձեռք պտըտցնելով ...

— Աս տարի բէք ունմիշ չըրի չիտակը... պէլքի ...

— Հա եա Վիչէն աղան ըսաւ քի, անոնք գային նէ ամիս մը առաջուրնէ կուգային, էյ ուշացաւ նէ ումէտը կտրեց տէ սիւքսիւքը առաւ մարդը ...

— Աղէկ ամա, կընիկ, փեսանիս ըռահաթսըզ պիտի ըլլայ, զէրէ տուներնիս նեղուածք է ...

— Ա՛ ... քաւ լիցի, նոյն իսկ կաղնիի կեղևէին մէջ անգամ հանգիստ կրնանք ընել ... բաւական է որ ձեր տանը մէջ ըլլանք ... կ'ըսէ փեսան ձեռքերը չիկելով:

— Ա՛խ ... ուր էր քի իմ աներ պապաս

ալ ողջ ըլլար տէ, երկու համալ ալ ես անոր նուէնը զրկէի, աս օրերուն ըսելով վար կ'իջնայ սանդուխներէն գործին երթալու համար, մինչ տիկինը ետեւէն վաղելով,

— Վիչէն աղա, Վիչէն աղա ...

— Ինչ է ան ... ո՞ր նիւմէոօէն կը կանչուինք կոր ...

— Նասըլ նիւմէոօ, ճանըմ ինծի մտիկ ըրէ ...

— Ինչ գիտնամ, օթէլը կը դիտնամ կոր ինքլինքս ... ի՞նչ կայ, ի՞նչ կուգես ...

— Խասապին չըբախը զրկէ քի թէփէլին իլէն խաւ ետաղտըլըն կտրէ ...

— Կընիկ, հայլանները կածեն կոր ... աղուոր սըղըռի միս առնեմ նէ չըլլա՞ր ...

— Չըլլար ճանըմ, կ'ելլայ կը քչէ ...

— Տահա աղէկ ըսիր եա, մէյէր ատանկ բան մը ըլլայ, զէրէ կէօյներուն նայիս նէ, խըյարը մէկտեղ սիֆտահ պիտի ընենք ...

— Դուն քիչ մը չէրէզ ալ շտկէ, հաղըր անուշեղէն մը առ, ուֆախ թէֆէխ ալթըն մէկիկ մէկիկ ըսելու չեմ, դուն գիտես ընելիքդ ...

— Իմ ընելիքս գիտեմ նէ, սօլուխս չիտակ չիկիշ պիտի առնեմ կընիկ, խեւքիս զարար կուգայ կոր, առաջ մէկ աղջիկնիս էր կարգենք զէրէ մասքաֆին ֆանթաղիին չենք դիմանար կոր կըսէինք, հիմա մէկին տեղը երկուք եղան ...

— Սուս ճանըմ, ան ալ մեր զաւակն է...

— Մեր զաւակն է նէ ի՞նչ կը պատըռտուիս կոր ... պէօհրլէճէն խաչէ առջեւին դիր ...

— Աման մա'րդ ... ցնդեր ես, ապուխսապուխ թող միտար կէնէ ... պիրիճիք փեսերնուս շա՞տ կը տեսնաս կոր երկու ճալճալ կտրենք պիտի տէ ...

— Ըրէ կընիկ ըրէ՞ ... կուգես նէ ինքզինքդ ալ չիչը զարկ տէ իքուամ ըրէ, ասոնց երես տաս նէ մեծ պահքին օխթը չաբաթն ալ թէփէյիդ վրայ պաղա ֆուռքէթաի պէս սաբլանմիշ կ'ըլլան ...

— Փեսաս չէ՞ մի ... չօդ չէյ, դուլխէս վեր տեղ ունի, տահա՞ ...

— Դուլխէդ վերը զարար չունի՞ ամա... կը վախնամ քի անկէ վարերը տեղ մը խոնմիշ կըլլա՞յ տէ ...

— Մըբսի վրա՞դ ... աչկիս մէջը կը նայի՞ս կոր, ես ան թիւովիս զոքանչներէն չեմ, էկէր օր ըլլայի նէ ... իշտէ անանկ:

— Իշտէ ես կ'երթամ կոր, նայէ քի տու-նին չորս տիրէկը տեղը մնայ, փեսադ եկաւ տէյի անոնք ալ իքոռամ չընես ...:

Այսպէս Վիչէն աղա իր գործին կ'երթայ ու պէտք եղած ուսելիքները առնելով կը դրկէ, մինչ տանը մէջ մայր աղջիկ փեսայ զուարթ օր մը կանցնեն և իրենք իրենց կորոշեն երեկոյին Վիչէն աղան գինովցնել ու մասքէ դնելով պարահանդէս տանիլ:

Երանի այն մարդուն՝ որ խելքը գլուխը կին մը ունի, մանաւանդ աղջիկ զաւակը կարգելէն վերջ, իսկ ան խեղճուկը՝ որ թեթեւ ու միամիտ կնկան մը տէր է, տեսէք թէ ի՞նչ փորձանքներու կը մասնուի և թէ ի՞նչ խաղերու կը գոհուի:

Կարծեմ վերը մոռցայ յիշելու կամ յայտնելու թէ՛ տիկին Բերբոնէ Վիչէն աղայի կինը, իր փեսան միւսիւ Սաճայագեանը կը սիրէ, և կարծեմ նոր և չըլլալիք բան մը չէ, և թէ՛ շատ սովորական:

* * *

Շարժի իրիկուն է:

Վիչէն աղա ուշ ատեն յոգնած դադրած տուն կը դառնայ ու դուռը զարնելով կ'ապասէ որ բացուի:

— Ձա՛թ ... չա՛թ ...

—

— Ձա՛թ ... չա՛թ ... չա՛թ ...

—

— Աճապ պաշկա դաբու վուռուեօրըդ, ըսելով երբ խեղճ մարդը վարանոտ ակնարկներ կը ձգէ տունն ի վեր, յանկարծ պատուհանը բացուելով,

— Բաթլամիչ չեղա՞ր ես, չօգ չէյ ... փեսիս կունակը տաք խավլու կը խոթեմ կոր ... Կ'ըսէ տիկինը ու պատուհանը կը դոյց ...:

Քիչ վերջը դուռը բացուելով,

— Ձի կըցա՞ր քիչ մը համբերելու, չօճու-խի դահէկ վաղցնելու պէս թաք թաք թաք, ի՞նչ կայ ...

— Քա կընիկ, պաղի սանձի կ'ընեմ տէ փորիս տաք բան մը չեմ կապել, ա՛ս փեսադ ի՞նչ խըյմաթըլ է եղեր քի, նէմ է առեր տէյի կունկին խավլու կը թխէք կոր ...

— Փեսայ ըսելը զաւակ ըսել է ...

— Էրիկ ըսելն ալ ցըռ էրիս ըսել չէ՞ ես, չօգ չէյ ... սա թէռլիկներս բեր ...

— Փեսիս տուի ... չորսպնետրով վեր ելիր ...

— Բէք էյի՛ ... ըսելով խեղճ մարդը վեր կ'ելլայ ու սենեակը մտնալուն կը տեսնէ որ պլիին դօնչեմ շտկուած բոլորն ալ չըջապատած կը խմեն ...

— Անուշներ ըլլայ ... բարի իրիկուն ձեզ ... անցած ըլլայ օղլում, նասըլ ըռա-խին քիչ մը ֆայտա ըրա՛ւ կունկիդ ...

— Ա՛ ... հաւատացէք որ շատ անուշիկ զոքանջ մը ունիմ ...

— Խերը տեսնաս օղլում ամա՛, ատա-տանկ չեն ըսիր, մատամիդ խերը տեսնաս կ'ըսեն ...

— Այո՛, բայց ձենէ աւելի ինձի կը մօտենայ, հիմա որ ...

— Համմէ՞ ...

— Այսինքն ձեր աղջիկը կնութեան առնելէս վերջ, զոքանջ հանըմս իմ եղած է, ես ալ անորը ...

— Կընիկ սրտեղէն փոխնորդ մը տուր տէ ես բըռթըս քակեմ, ղէրէ տաղ-տաքի կէլմիչ պաղտաքինի քովուեօր ...

— Տէր ողորմեայ ըսէ Վիչէն աղա, դուն տունին քիւթիւկն ես ...

— Քիւթիւկն եմ ամա, չիւրիւմիւշ եղայ տէ կը փոխեն կոր, տահա թագէն հէմ ալ մէշէ օտուենի է քիւթիկ մը քի ղիմանայ ...

— Ամա՛ն, հիչ ալ շախայի չես ի քար, տղան երկու հատ խմեց քի, ասանկ օր է տէյի, դուն իսէ կայներ քէննայի կ'ընես կոր ... ըսելով Վիչէն աղայի ձեռքէն կը բռնէ ու դօնչալին մօտը կը նստեցնէ, մինչ Վիչէն աղա կընկանը ականջն ի վար ...

— Սա հէրիֆը թէփէլէմիչ պիտի ընեմ կընիկ ...

— Ինչո՞ւ, խելքիդ եկաւ զահէր ...

— Հա խելքիս եկաւ քի թէքմէիս տակը առնեմ տէյի ...

— Ի՞նչ ըրած ունի տղան, անանկ փեսայ մը գտեր ես տէ կը խաղա՞ս կոր ...

— Կատուններն ալ անանկ են, բռնած մուկերնուն հետ կը խաղան կը խաղան ետ-քէն կը ճգմեն ...

— Սիւլիւնի պէս տէլիւանլը ... պօյը սիրէն ... հէմ ինծի նայէ քեզի բան մը պիտի ըսեմ ամա, մէկ երկու հատ ճնկէ տէ անկէ ետքը ...

— Կընիկ քու թէլաշդ հի'չ չեմ հասկնար կոր ... լեզուիդ տակը բան մը կա'յ ամա ...

— Խմէ' ... աս օր բարկենդանք է, տէրտէրները պիլէ խալբախնին կը նետեն աս օրին ...

— Մամա' ... հայրիկիս խօսք բացի'ր, ըսի'ր, սա ուր է ...

— Սուս աղջիկ, կեցիր խըվամը գտնայ անկէ ետքը ...

— Ինծի կուգայ քի չէվիրմէն չպիտի բռնէ աղջիկ, չիւնքիւ խըվամը ուշ պիտի գայ, կ'ըսէ Վիչէն աղան, լեցուն տանկլոխ օղիին գաւաթը անկելով:

— Զոքանջ հանըմը'ս ... արեւըդ սիրեմ, սանկ քովս եկուր նայիմ, իմին թօմ պուլ զոքանջ հանըմըս ... ըսելով միւսիւ Սաճայագեան թեւը կը պարզէ զոքանջին վըրայ, որուն ի տես Վիչէն աղա ոտքի ելլալով,

— Մնաք բարով ... մեզի ալ հրամմեցէք ...

— Քա' ... աս ինչ է, ո'ւր լսարով ...

— Տունը խապար ձգած չեմ, հիմա մատամ կը պէքէյէ ...

— Նասըլ մատամ ... հէ' ... կիտի սէնի կիտի' ... ինէ խայրի մատամ հէ' ...

— Էկէր խախելու բան մը ըլլար նէ դուն հիմա խըզըլի պէս կաս կապուտ պիտի ըլլայիր ... ո'ւր ենք քա ... Հաճի էֆտիկին պալօ'զն ենք ...

— Ինչ կ'ըլլայ եղեր, փեսաս իս կը սիրէ տէ թեւը օմուզիս դրեր է ... չա'տ տեսար, խըսիւանմի'չ կ'ըլլաս կոր ...

— Ես մինչեւ հիմա փեսայ ըսելը զաւակ ըսել է տէյի գիտէի, ֆախաթ եանըմի'չ եմ եղէր, մէյեր փեսայ առնելը օղթախ առնել է եղէր ...

— Սո'ւս, քար պիւրնիդ, աս մէկ խատէ խով ասանկ ապուխտապուխ դուրս կուտաս կոր, նէ ես մէկ երկու հատ նետես նէ աճապ ինչ ձուներ պիտի բերես թէփէյիս ...

— Զունը իմ գլովս եկաւ կընիկ, կ'ըսեն քի ձուն գայ նէ ծառերը ֆիլիզէնմի'չ կ'ըլ-

լան, չա'տ չի քչեր մազերուս տակէն պզտիկ պզտիկ դուրս կուտայ ...

— Խնդրեմ Վիչէն աղա, ձեր այս իրիկուան արարքը ինձ յանդէպ կատարեալ էն սիւլթ մըն է, դուք ըսել կուզէք որ ես, այո', այսինքն ես ...

— Սէն սուս օլ, դապահաթ պիզիմքինտէ տիր քի իքի եիւզ լիռայա նամուսումը սէնին կիպի հէրիֆէ սաթտը ...

— Հայրիկ, դող կ'ելլամ կոր, բարեկենդան օրով ասանկ ըլլալու էր ...

— Աստուծոյ կրակին գաս հէմէն ... քա խելքի'դ եկաւ, ինչ աֆուսիթ է ատ քի պիր տիւզ դուրս կ'ուտաս կոր ... կ'ըսէ տիկինը երեսին կարմիրը բաթլիճանիի դարձած:

— Հասկցայ կընիկ, ինծի եղաւ ըլլալիք, պարէ դուռ դրացի ալ գլուխնին չի ժողվենք, սա ըռախին լեցուր տէ չարը խաբանի ...

— Հա չէօյլէ, եօլի եկուր, ես ալ գիտցայ քի խոռոզլանմի'չ պիտի ըլլա'ս տէ ...

— Աֆէրիմ հայրիկ, խելքդ սիրեմ քի միտքիդ մօտ է ... անուշիկ հայրիկս, ծառքովս ըռախի մը տահա լեցունեմ տէ կուլ տուր ...

— Քա աղջիկս, տահա ինչեր կուլ կուտամ կոր ... լեցուր տէ տուր նայիմ ...

— Հա' չէօյլէ, ասանկ օրի ամէն մարդ մուհապէթ կ'ընէ, դուն իսէ ...

— Հա', կընիկս հա', մուհապէթ ըրէք, մուհապէթ ընելու է եղեր ... մուհապէթլի ըլլալու է, անանկ է' եա' ... ու լեցունած գաւաթը կը կոնծէ, վրայէն ալ մեզի մը առնելով ...

— Ինծի նայէ Վիչէնիկ աղա քեզի բան մը պիտի ըսենք ամա չէ չպիտի ըսես ...

— Կընի'կ, մինչեւ հիմա եղածներուն ուրի'ն չէ ըսել տուր քի ... հրաման ըրէք կլիս դար վար երեքցնեմ, ծանա ալ չի հանեմ, ինչ կուզէք նէ ան ըլլայ կատարի ...

— Հաւատացէք Վիչէնցիոս աղա, գերաւ հրաշ, գերքնական, գերադոյն, գերա ...

— Հա' ծօ քէռաթա ալ ըսէ թամամ ըլլայ ... կընի'կ, ամէն բանին հա' ամա, ատ հէրիֆը սուս չընես նէ զըլանայէն պիտի ելլամ ավթըն ...

— Քա ճանըմ փեսանիս գրող կարգացող է, լեզուն թէմիւզ է, քիմ պիլի ինչ մէթի-

էներ կը կարգայ կոր տէ չի հասկնալուդ կը սրթողիս կոր ...

— Պէ ախար վաղ անցայ, մէթիէ չեմ ուզեր, մէկ ըռախին չորս կ'ըլլայ կոր խըսէս ...

— Շատ լաւ Վիչէն աղա, կ'ըսէ փեսան, որուն քնաւ գործին չեր գար Վիչէն աղան չափազանց նեղացնել, դուք հայր կը սեպուիք, ձեր ցասումը, ձեր բարկութեան արտայայտութիւնը՝ ի լաւն, ի բարին և ի ճշմարիտը կը թարգմանեմ ...:

Ու մինչ պոսպէս կէս դուարթ կէս ցասկոտ բարեկենդանի նախատօնանքը կ'ընէին, դուրսէն դուռը ուժգին կը զարնուի,

— Բա ո՞վ է աս վախթ ըսելով երբ տիկինը վար կիջնայ դուռը բանալու:

— Վո՛ւյ ... ոտքերս ճուր ինչաւ ... քա մարիկ պազիսին ալ ինտոր չաբառըլը սալըս կուտայ ... բարի իրիկուն ձեզ, ըսելով, այս անգամ ալ փեսին՝ միւսիւ Սաճայագեանին մայրը և երեք քոյրերն են, որոնք բարեկենդանի համար խնամինքնուն տունը կուգան երեկոյին ժամը մէկին:

Ու հազիւ թէ բոլորը մէկ սանդուխներէն վեր կ'ելլան ամենայն աներեսութեամբ և սայղըսըլօրէն, Վիչէն աղա քանարէներուն տակէն կօշիկները կը փնտռէ՝ առանց բարով եկաք մը կամ բարի իրիկուն մը ըսելու, ու հագնելով փողոցին դուռը ձեռք կ'առնէ:

— Բա ո՛ւր կ'երթաս կոր Վիչէն աղա, կ'ըսէ տիկինը զարմացած ...

— Հիմա կուգամ ... սա քովի օտուն տեքսին երթամ տէ, մարդուն ըսեմ քի, պօշ տեղ ունի նէ մէկ երկու օրուան համար չորս հինգ ետթախ ձգենք տէյի ...:

[Շարունակելի]

ԼԻԼԱ

Յ. Գ. — Յաջորդ թիւով պիտի նկարագրենք Վիչէն աղայի գլխուն եկած փորձանքները, թէ ինչպէս համոզուելով իր հիւրերը մասքէ կ'ըլլան ու բոլորը մէկ պալօ կ'երթան, խեղճ մարդուն քովը ձգելով մէկ աչքը կոյր ու տգեղ խնամին՝ միւսիւ Սաճայագեանի մայրը ու իրենք կղբօնուն մինչև առաւօտ:

Անձնագովասանք չըլլայ, բայց կարծէ որ կարողք շարունակութիւնը այս դարասկզբիկ նկարագրականին:

Լ...

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՔիլիՄի. — Վ. Կ. էֆ. Ձեր ղրկած վեցամսեայ բաժնեգինը ստացած ենք:

ԷՏԵՐՆԷ. — Գործակալութիւն. — Կը խնդրենք որ անոնց՝ որոնց պայմանաժամը նորոգուած է ու դեռ չեն վճարած, հաճիք զանձեկով մեզ ղրկել: Հոս չենք ուզեր առնանք յիշատակել, դիմաւորով որ դուք ունիք:

ԷՐԶՐՈՒՄ. — Գործակալութիւն. — Կը խնդրենք որ հաճիք մեզ հասցնել այն բաժնեգինները՝ որոնց պայմանաժամը վերսկսած է:

ԻԶՄԻՏ. — Ա. Կ. էֆ. Ձեր կողմէ եղած առաջարկը կ'ընդունինք, բայց փափաքելի է որ դուք ալ գրէք մեզ այս առթիւ:

Նոյնպէս կը խնդրուի մեր Պատ. բաժանորդներէն՝ որք հաճին ժամ առաջ մեզ հասցնել իրենց նորոգ բաժնեգինները, որպէս զի չստիպուինք օրը օրին դադրեցնելու թերթերը:

ԳԵՂԵՑԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԻՆ ՕՐԵՐ

Պուէտ Խաչատուր Միսաքեան եւ իր ժամանակակից իմացականին վրայ հայեացներ.

Գ Ր Ե Յ

Տ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

Այս պատմական ու բանասիրական գործը, որուն շատոնց կը սպասուէր, լոյս տեսած է այս օրերս Սաքաեան տպարանէն: 40ի չափ ամփոփ էջերու մէջ՝ կը պատկերացունէ 19րդ դարու թուրքահայ զրականութեան և երեւելի անձերու գոյնզգոյն նկարագիրը, ծանրանալով դիմաւորապէս Պուէտ Խաչատուր Միսաքեանի վրայ, որ այդ անձերուն ամէնէն կարկառուններէն էր՝ իբրեւ բանաստեղծ-փիլիսոփայ:

Կը ծախուի Կ. Պուլիսի բոլոր գրաւաճառներուն քով:

Գին 7 1/2 դր.

ԷՋ ՄԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՊՈԻՇՈՒԹԻԻՆՆԵՐԷՍ

[ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՌԹԻԻ ԳՐՈՒԱԾ]

Օր մը ինձի քսին քե ,
Կոմիկ աղան մեծ մարդ է ,
Այր բարեգործ երկիւղած ,
Չունեցողին կուսայ հաց ,
Կքսեին քե աղփասաց ,
Բարա կուսայ ձեռքն է բաց ,
Ով որ երբար աղաչէր ,
Բան մը ընել կը հաճէր ,
Վանառական բարեգործ ,
Բուրդի վրայ նա մեծ գործ ,
Կընէր . . . ու միշտ յաջող էր ,
Շատ բարա կար երբ նողէր ,
Ձաւակ չունէր ունէր կին ,
Որուն կուսար իր հոգին ,
Տուն տեղ շէնք փառաւոր ,
Կեանք վարէին միմաւոր :

×

Ու քանի որ մեծն Ասուած ,
Հարուստներուն է տուած
Տալ նուիրել , ձեռք բաց ,
Ըլլալ բարի ողորմած ,
Այս համոզմամբ օր մ'ալ ես ,
Նոր ելած դեռ դըպրոցես ,
Խնդրագիր մը գրեցի ,
Որ զիս դնէ մէկ գործի ,
Խնդրելով որ չի մերժէ ,
Զի վիճակս շատ գեղ է ,
Ուրախ ըլլալ չե ինձ փոյթ ,
Բաւ է ճարեմ հացիս կուս :

×

Տասն եւ հինգ օր էր անցած ,
Որ զիրս էր ստացած ,
Առտու ցերեկ իր ճամբան ,
Կ'սպասէի իբր անբան ,
Երբ փողոցը տեսնէի ,
Ուզելով որ ինձ նայի ,
Նսեւեմ միշտ կ'երթայի ,
Որպէս մի ոմն *հնայի* :

×

Օր մ'ալ հասաւ ալ ճարս ,
Ըսի քանի ո՞հ չարս ,
Երբամ անձամբ աղաչեմ ,
Զի ուշա/ս եմ . . . աղա չեմ ,
Հետեւաբար ուղղակի ,
Գացի քանը դուռ զարկի ,
Որ զայն բացաւ մեղմ յուշիկ ,
Սպասուհի մը խուշիկ ,
Բայց կ'երեւար քե Յոյն էր ,
Զի խառնուիկ բուխ գոյն էր ,
Ըսի աղան որ հոս է ,
Դեռ իրեն վերն քսէ ,
Թէ կը հանի՞ տալ արդեօք ,
Պատասխան մը վճամոք ,
« Օ՜ տեսնուի՞ս քի քիլիս ,
Էսի իսկ պախալիս » ,
Ու լեզուին կապը բոլ ,
Տուաւ հանեց սիրքս դող ,
Առ քեզ փորցանք փլօցու ,
Էօր ջուրէն եկ անցու ,
Պէտքով մը շիք խօսուն ,
Հասկնաս նէ աշկ օյսուն ,
Զիս բրած էր *հյրեւնէ* ,
Որ կը նայի *սերտնէ* :

×


Մէկ մ'ալ նայիս վեր սուփան ,
Գլխուն վրայ ուս/ուփան ,
Աղան կուգար հեւալով ,
Երես ի վեր պօռալով ,
« Ծօ՛ ի՞նչ կուգես աներես ,
Որ ետեւս ինկեր ես ,
Առտու ցերեկ իրիկուն ,
Քուկին աչիդ չիկա՞յ քուն ,
Տեսնուի՞ս պէս ալ ինչէր ,
Կը գրէի կոր , ծօ փիմեր ,
Բարա վասակ որ կուգէի ,
Մ'ըլլաք բացիկ ու գեղեկ ,
Լեզունիդ ձեզ քաշեցիք ,
Ու գացիք եւ քրեցեք » :

Մնամ Սկիւտար (*)

ԵՐԵՎԱՆ

(*) Երբ միշտ կը գրես «Մնամ Սկիւտար» ,

Դուն երբեք աշուր եղալըս չե՞ս երթար :



ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Վարժարանին օգնական ուսուցիչէն կը խնդրուի, որ պէս զի բարեհաճութիւնը ունենայ տըղաքը տուն զրկել այն սլարագաներուն ուր պզտիկներու բնական օրինք աղտեղութեան մէջ կը գտնուին, փոխանակ մինչեւ երեկոյ զանոնք վար դնելու:

ԳՈՆԵԱ-ԷՐԷՅԼԻ. — Հոս հեղինակ հի մը որ Վեհիւսի նախանձը գրգռելու չափ տիպար դեղեցկութիւն մը ունէր, սիրականտակաբանութեան մէջ (նոր բառ) այնքան յառաջ կ'երթայ որ իր պատիւը կը գողցնէ երիտասարդի մը: *Tant pis pour lui, tant mieux pour elle* պիտի ըսէր Ալփիար:

ՍԿԻՒՏԱՐ. — Ընտանեկան երեկոյթները մեծ ոգեւորութեամբ մին միւսը գերազանցելու չափ չքեղապէս տեղի կ'ունենան: Կըսուի թէ ցատկեմճի միւսիւ մը 348 ժամէ ի վեր աչքերը չէ գոցած: (Այս հաշուով նոյնչափ ատեն ալ աչքը բաց...ութիւն ըրած է, պռաւօ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Ոսկեդարու հայագետ մը այս տարուան նորոյթը եղող Սէն Պէնո դարեջուրին անունը թարգմանած է սէն, պէն, օ: Շնորհաւորելով հանդերձ, կը խնդրենք որ տարին տաս երկու ամիս գործածելի բառերը հայացնելու աշխատի, քան թէ այնպիսի բառեր՝ որոնք սէն պէնօի պէս քանի մը անընչան օրեր միայն կը կրկնուին:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ղալաթիոյ եկեղեցին ուխտի գացող տիկին մը և հա-

սուկ օրիորդ մը ժամկոչ աղբօրը բռն պռաւոր պէտք եղածին պէս չի վճարելուն հետեւանօք, չեն կրցած ի ցոյցս մարդկան ուղածնուն պէս փայլիլ տաճարին մէջ: (Վախ եաւրում, պարէ նոր շաբաթանիդ ալ դրած չըլլայիք. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Ե. Թօլայեանի նպաստին հասոյթը սթաթիսիէններ (որոնք անշուշտ զիւրաւր դասակարգին կը վերաբերին) 160 ոսկի հաշիւ ըրած են, մինչդեռ իրականութիւնը սա է որ, Թօլայեանի ականջները աւելի շատ ծափեր ընդունեցին՝ քան թէ քակը ոսկի:

ՆՈՅՆ. — Մարըլեան նուագահանդէսին Սկիւտարցի տիկին մը փառաւորապէս քնացեր է...: Աւելի լաւ կ'ընեն կարգ մը հովիւներ տուներին նստելով չօրապ հիւսեն, քան թէ՝ իօնսի մէջ քուն քաշեն: (Ականջդ խո՛ւլ էր տնաչէն. Ծ. Խ.):

ՊՐՈՒՍԱ. — Կ'ըսուի թէ վարժարանին մէջ մանկավարժութեան դասընթացք մ'ալ աւելցուած է արդէն անգոյ յայտագրին վրայ: Ուրախառիթ սլարագայ մըն է այս, որովհետեւ ամէն ժամանակ ձեռք չ'անցուիր ասանկ հաղուագիւտ առիթ մը, մանաւանդ մեր քաղաքին մէջ՝ ուր մինչեւ հիմա մանկավարժ տեսնուած չէր: Յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթենք:

Ursofiuskr ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասցէսի բիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԵԳ ԵՎ ՏՊԱՅՈՂ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՎ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուլթան Զաման, Թօփալեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թելքոհներու և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Ուկարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—25



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ Խանիկ
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սեյրանէ, Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապէտ եւ Ճաւոնէ:

Ամենէն գոհաբարհաճներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտոյն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատարային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ չղթայներու, գրպանի պատի և քօնաօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի ըմբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիպիլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՁՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 ղեղէ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-14

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։